ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ՈՒՆԻ՞ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերջերս, գրեթե նույն ժամանակահատվածում Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան երկու հոբելյան էր տոնում. ԳԱԱ 60-ամյակը եւ ԳԱԱ պրեզիդենտ ՖԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ 80-ամյակը:

Նրա հետ «Հայոց Աշխարհ»-ի հարցազրույցը նպատակ ունի մեկ անգամ եւս անդրադառնալ գիտության ոլորտի մեր նվաճումներին եւ հիմնահարցերին:

-Անցած տասնամյակների ընթացքում ինչ դեր է կատարել գիտությունների ակադեմիան մեր ժողովրդի կյանքում:

-Նախ՝ խոսենք այն մասին, թե ինչու ստեղծվեց ակադեմիան: Եւ ինչո՞ւ հենց 1943 թվականին: Զարմանալի է, չէ, դա պատերազմի ամենաահեղ ժամանակաշրջանն էր: Որովհետեւ մեր գիտնականները դեռեւս այն ժամանակ զբաղվում էին ռազմական տարբեր խնդիրներով: Հիմա արդեն դրանց մասին կարելի է բարձրաձայնել:

Մեր ռազմական ներուժը այս հարցում մեծ դեր է ունեցել. ակադեմիայի ստեղծումը վերջինիս հետ է կապվում: Անցած 70 տարիների ընթացքում երկրի հզորացման մեջ ջափազանց մեծ է եղել գիտության դերը: Այն ժամանակ մի տեսակ չէր կարեւորվում ակադեմիան պաշտպանությանն է մասնակցում, թե՞ տնտեսական զարգացմանը: Եւ մեկն էր անում, եւ մյուսը: Որովհետեւ մի ընդհանուր կաթսա էր:

Տեսեք, ասում են Երեւանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ, եւ շատերը հասկանում են համակարգիչներ ստեղծող հաստատություն: Բայց համակարգիչները այդ ինստիտուտի շատ փոքր մասն էին կազմում: Չնայած ԽՍՀՄ համակարգիչների 30 տոկոսը մեր ինստիտուտի ստեղծածն էր: Ինստիտուտի հիմնական նշանակությունը պաշտպանականն էր: Ի դեպ, ես եղել եւ հիմա էլ մնում եմ թռչող ապարատների ղեկավարման գլխավոր կոնստրուկտորը եւ, վստահեցնում եմ, Նախկին ԽՍՀՄ-ում չկար որեւէ ռազմական համակարգ, ուր մեր ստեղծած տեխնիկան չօգտագործվեր: Բայց դրա մասին իրավունք չունեինք ասելու:

-Անցած տարիների ընթացքում փոքրիկ Հայաստանն այդքան մեծ դերակատարություն է ունեցել բնական հիմնարար գիտության ասպարեզում: Իսկ այսո՞ր: Ինչպե՞ս եք պատկերացնում ԳԱԱ ճակատագիրը: Չէ՞ որ հայտնի է՝ մեր գիտնականները այժմ, մեղմ ասած, խեղճ միճակում են հայտնվել: Հանիրավի չէ՞ նրանց շատերի դժգոհությունը եւ ցածր աշխատավարձից, եւ գիտության հանդեպ պետական վերաբերմունքից: Ձեր կարծիքով, այսօր մեր գիտության ասպարեզը կտրուկ քայլերի կարիք չի՞ զգում:

-Վերջերս ԳԱԱ 60-ամյակի հանդիսությանը հետաքրքիր ելույթներ շատ եղան: ՌԴ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Օսիպովը շեշտեց, որ Հայաստանի ակադեմիան եղել եւ մնում է նախկին Խորհրդային Միության ակադեմիաների մեջ իր նշանակությամբ երրորդը՝ Ռուսաստանի եւ Ուկրաինայի ԳԱԱ-ներից հետո: Մեր հյուրերը եղան ակադեմիայի տարբեր ինստիտուտներում: Պետք է նշեմ, որ գիտական տեսանկյունից նրանք բավական խոր տպավորություն ստացան: Այդ այցելությունից հետո համատեղ աշխատանքի բազմաթիվ առաջարկներ ստացանք:

Նկատեմ, որ այժմ ակադեմիան տեխնիկա, տաքացման միջոցներ, դեղորայք ձեռք է բերում ոչ թե պետական, այլ միջազգային կազմակերպությունների՝ պայմանագրերի, դրամաշնորհների միջոցով: Իհարկե, դա աշխատավարձ չէ: Իհարկե, ճիշտ եք ասում, ցածր է աշխատավարձը, բայց, ըստ երեւույթին, պետությունը չի կարողանում ապահովել այն որոշման իրականացումը, որն ընդունել է: Օրենքում գրված է՝ Հայաստանում գիտությունը պետք է ստանա բյուջեի ծախսային մասի 3 տոկոսից ոչ պակաս, բայց հիմա ստանում ենք մոտ 1 տոկոսը: Չի կարելի ասել, թե կա հնարավորություն, բայց չի արվում, բայցեւ ինչ-որ տեղ կարելի է բարձրացնել այդ տոկոսը եւ ժամանակին հասցնել օրենքով նախատեսվածին:

Մենք հույսեր ենք կապում պետության ղեկավարների հետ: Մեզ մոտ եղավ հանրապետության նախագահը, Աժ նախագահը, մի քանի անգամ վարչապետը... Նրանք մեզ հուսադրում են, թե դրությունը կփոխվի:

Պետությունը տարեկան մի քանի գիրք հրատարակելու գումար է տալիս, մինչդեռ գիտնականը գիտնական է դառնում այն ժամանակ, երբ հրատարակվում է: Բայց մենք կարողացել ենք հրատարակել 100-ից ավելի գիրք: Ինչ միջոցներով՝ կհարցնեք: Կամ հովանավորչական, կամ գործնական-պայմանագրային: Համագործակցության պայմանագրեր ունենք եւ Ռուսաստանի, եւ Գերմանիայի ու Անգլիայի, եւ մյուս ակադեմիաների հետ:

-Ձե՞ք կարծում, որ շատ գիտնականների ոչ այնքան ցածր աշխատավարձն է հուզում, որքան այն զգացողությունը, որ իրենք արժանի հոգածության չեն արժանանում պետության կողմից:

-Ճիշտ եք: Դրա պատճառը գիտե՞ք որն է: Շատերը կարծում են, թե շուկայական հարաբերություններում կարեւորը ինչ-որ տեղից մի քիչ ավելի էժան ապրանք գնելն ու թանկ վաճառելն է: Մենք դա չենք համարում վաճառք: Եթե կարողանանք մեր հիմնարար գիտության առաջխաղացումը ապահովել, կարող ենք այնպիսի տեխնիկա արտադրել, որ ավելի թանկ կարժենա, քան այն, ինչ այսօր վաճառվում է:

Երեւանում վերջերս անցկացված տնտեսական համաժողովի ընթացքում հրաշալի գիտատեխնիկական առաջարկություններ էին արվում, որոնք հետաքրքրում էին արտասահմանյան բիզնեսմեններին: Դժբախտաբար հայաստանցի գործարարները քիչ էին, մինչդեռ ցանկալի էր, որ հենց նրանք հետաքրքրվեին: Քանզի շատ բան կարող են անել գիտության ձեռքբերումներն արտադրության մեջ ներդնելու համար: Ինչ խոսք, սրա համար ժամանակ է պետք: Պարզապես մարդիկ պետք է հույսը չդնեն դրսից գնել-այստեղ վաճառելու վրա, այլ մեր ստեղծածին պիտի ապավինեն:

-Գիտության մեջ ո՞ր բնագավառն եք համարում օգնության կարոտ:

-Մենք խոսում ենք բարձր տեխնոլոգիաներից, բայց եկեք մտածենք հայագիտության մասին, ո՞վ պետք է զբաղվի հայագիտությամբ: Ուրիշները չեն զբաղվի: Առաջին հերթին այսօր բողոքում են հայագիտությամբ, ազգագրությամբ, բանասիրությամբ, արվեստի հարցերով զբաղվող գիտնականները: Նրանց գրքերը չեն հրատարակվում: Նրանք դրամաշնորհներ չեն ստանում: Նրանք են պետական հոգածության կարոտ: Եւ սրա պատասխանատուն մենք ենք:

ՄՆԱՐԻՏ ԵՍԱՅԱՆ